

- 1796 — 1798 Միքայել Ջիզի.
 1798 — 1799 Յովհաննէս Դէօրէօդ (Թուրք).
 1799 — 1800 Գրիգոր Տանիել.
 1800 — 1801 Միքայել Ջիզի.
 1801 — 1802 Յովհաննէս Դէօրէօդ.
 1802 — 1803 Միքայել Ջիզի.
 1803 — 1804 Զաքարիա Զօգօրիաշ.
 1804 — 1805 Միքայել Ջիզի.
 1805 — 1810 Ղազար Ջիզի.
 1810 — 1813 Գրիգոր Տանիել.
 1813 — 1814 Եմերիկոս Տանիել.
 1814 — 1832 Գրիգոր Տանիել.
 1832 — 1839 Վարդան Լէնայել.
 1839 — 1850 Եւգինէս Տանիել.
 1850 — 1851 Յովհաննէս Ֆօրդ.
 1851 — 1855 Յովսէփ Վոլֆ
 1855 — 1860 Յովսէփ Պիլճ. *
- 1860 — 1864 Աստուածատուր Նաբիճան.
 1861 — 1875 Յովհաննէս Գօրաջօնի.
 1875 — 1877 Ղազարոս Ջիզի.
 1877 — 1882 Գրիգոր Դոմիօզ.
 1882 — 1885 Յովսէփ Եօգէվիթ.
 1885 — ցայսօր Վարդան Լէնայել, որ քաղաքագէտ Խոհական նութեամբ կը կառավարէ Քաղաքը : Ապագայ յաջորդաց լոյս կը մաղթենք յերկնից , որ իրենց նախորդաց նման՝ օգտագար Ալլան Արամեան սերնդոց , և արդարութեան կիրաքը շի մոռնան հաւասար գործածելու :
- * 158 տարուան շրջանին մէջ 62 անդամ քաղաքագէտի ընտրութիւն եղաւ . Եղիշաբեթ Պուպիխ , և յիշեալ անձինքներէ մէկը միայն (1855-1860 Յովսէփ Պիլճ) ստարագգի էր , մէկալոնք աղդային :

Հ. Ն. Ջիզի

ՆԻՔԵԼԻՆ ՆՈՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Վկրէլը որ տասնեհինգ տարի առաջ՝ հազուագիւտ մետաղ մ'էր և հետևաբար սուզ ալ , ներկայիս ճարտարագործութեան մէջ շատ աւելի կը գործածուի , նոր գալետնից և գանատայի հանքերը գտնուելէն և գինը զգալի կերպով ցածնալէն վերջը :

Ուստի անօգուտ չի թուիր մեզ այս նկատմամբ քանի մը ծառօթութիւն տալ մեր ընթերցողաց, քաղելրվ զայնս վերջերս 'ի Բարիդ հրատարակուած գրքուկէ մը՝ յորում կը նկարակրուի այս մետաղին ճարտարագործութեան մէջ ունեցած զարգացումն և յառաջադիմութիւնը և նորա գլխաւոր հանգերը:

Ճիշդ ըսելով գեռ երկու երկիր կայ միայն որ այս մետաղը մեզ կը մատակարարեն մեծ քանակութեամբ. Նոր Գաեթոնիա և Գանդատա. սակայն ուրիշ ահագին ծանօթ մթերանցներ կան այլեայլ տեղեր՝ որոնք գեռ չեն շահագործուած. ասոնց մէջ նախ և առաջ պէտք ենք յիշատակել Ռւրալի կողմերը՝ ուր այս մետաղը կրկին ձևով կը գտնուի. կամ՝ իրբե ջրատեալ գաւարզատ մագնէսիոյ և կամ՝ իրբե ծմբուտ (Solfuro). կը գտնուի դարձեալ ոչինչ քանակութեամբ 'ի Սարդենիա, 'ի Ապանիա և վերջին ատեններս նաև 'ի Կիրանովալ և 'ի Քիլի: Սակայն տեղական պարագայից և փոխադրութեանց դժուարութեան պատճառաւ՝ առայժմ այս տեղեաց արդենաբերութիւնն չնշին է:

Ինչպէս ամենուն յայտնի է՝ զուտ նիբէլը համեմատութեամբ իւր յարազօդներուն շատ քիչ կը գործածուի. այս բաղադրութեանց գլխաւորն է խառնուրդն 200⁰ նիբելի և 800⁰ պղնձոյ. այս յարազօդն սպիտակ մետաղաց մէջ ամենէն աւելի ուսումնասիրուեցաւ և գործածուեցաւ. վասն զի գրեթէ եւրոպական ամէն պետութիւնք իրենց նորանոր հրանօժոց ուումբերուն պատեանց ասկէ կը զինեն: կը գործածուի դարձեալ պղնձոյ տեղ՝ շոգեկառաց հնոցներու շինութեան մէջ. փոխանակ արծթի կը գործածուի սեղսնոյ հարկաւոր առարկայից, պատառաքաղներու շինութեան համար և մասնաւոր տեսակ մը արծաթեայ անօթներ և այլ մանր առարկայներ կը շինուին որ կը կոչուին Աշխենիափ կամ՝ Քրիսթոփի արծաթեղէնք: Միայն այսպիսի պիտոյից համար՝ տարուէ տարի հարիւրաւոր տակառաշափ այս յարազօդէն կը գործածեն. շինութեան կեդրոնն է 'ի Փենսիլվանիա Վագըրպըրի ձորահովիտը, որ օժտեալ է բազմաթիւ ջրոյ հոսանք և փորիկ ջրվիժգք և փորձ և ճարտար գործաւորգք:

Սակայն նիբէլի ամենէն աւելի գրական գործածութիւնն է դրամոց շինութիւնը, փոխանակ պղնձոյ, մանաւանդ. յԱմերիկա. կը դնենք հոս այս պետութեանց ցանկը որ այս դրամը կը գործածեն և սկզբնաւորութեան տարին.

Միացեալ-Նահանգք	1853, 1864, 1869, 1874 և այլն
Զուիցերի	1858, 1871, 1881, 1883, 1889
Պելճիա	1861, 1862, 1863
Գոսդա-Ռիդա	1867

Փերու	.	.	.	1868 , 1864
Հոնտուրաս	.	.	.	1869 , 1870
Ճիամակքա	.	.	.	1871
Պրազել	.	.	.	1871
Քիլի	.	.	.	1871
Գերմանիա	.	.	.	1874 , 1876 , 1888
Գոլումպիա	.	.	.	1874
Ճարոն	.	.	.	1875
Վենէցուէլա	.	.	.	1876 , 1886
Մկոսիկո	.	.	.	1882
Սերպիա	.	.	.	1883
Էքուադոր	.	.	.	1884
Պուլկարիա	.	.	.	1887
Ռումինիա	.	.	.	1891
Արժանդին	.	.	.	1894

Կոխուած դրամոց մեծ մասը 40 և 20 հարիւրչեց կտորներ են : իսկ յԱմերիկա՝ պատերազմական նաւուց համար՝ տեսակ մը նիքելապատ պողպատ կը գործածեն որ ցարդ փորձուածներէն ամենէն աւելի դիմացկուն՝ և զօրաւորն է : Նիքէլի արտադրութիւնն մինչև ց1878 յորում նոր Գալետոնիոյ հանքերը գտնուեցան՝ գրեթէ մի և նոյն մնաց . նոյն ժամանակ բռվանդակ աշխարհի վրայ՝ գրեթէ 400 տակառաչափ կ'արտածուէր . իսկ 1880է վերջը՝ թիւը բարձրացաւ 1200 տակ . և 1884ին 2000 տակ :

Գանատայի նորագիւտ (1888) հանքերը՝ արագ զարդացումն ունեցան, մանաւանդ որ թէ տեղափոխութիւնն և թէ աշխատութիւնն շատ աւելի գիւրին է քան 'ի նոր Գալետոնիա, որոյ արտադրութիւնն 1887ին 2600 տակո . էր . իսկ Գանատա իւրաքանչիւր տարի 4500–5000 տակո . կ'արտադրէ . և քիչ ատենէն յուսալի է որ երկուց երկրաց արտադրութիւնն հասնի 10.000 տակառաչափի :

իսկ նիքէլի գինն բնականաբար շատ փոփոխութիւններ կրեց : 1876ին (մաքուր զուտ մետաղին վրայ է խօսքերնիս) մի հազարակրամ կ'արժէր 18 ֆրանք . քիչ վերջը գինը շուտով իջաւ 'ի 10 և յետոյ մինչև 'ի 6 ֆր . 1883ին 4 ֆր . և ցարդ նոյն գնով կը վաճառուի :